

Կ-894-10.11.2015,06.09.2016-ՄԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը սահմանում է հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) իրավական վիճակը, կարգավորում է նրա ստեղծման, կառավարման, գործունեության, վերակազմակերպման և լուծարման ընթացքում ծագող հարաբերությունները:

Հոդված 2. Կազմակերպության կարգավիճակը

1. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ ֆիզիկական անձ) և (կամ) իրավաբանական անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:

2. Կազմակերպությունը կարող է լինել առանց անդամության սահմանափակման կամ սահմանափակ անդամությամբ:

3. Կազմակերպությունը սույն օրենքին համապատասխան՝ ինքնուրույն է որոշում

իր կազմակերպական կառուցվածքը, գործունեության առարկան, նպատակները և ձևերը:

Հոդված 3. Կազմակերպության գործունեության նպատակները

1. Կազմակերպությունն իրականացնում է իր կանոնադրական նպատակներից բխող գործունեություն: Կազմակերպության գործունեության նպատակները սահմանվում են նրա կանոնադրությամբ:

2. Արգելվում է Կազմակերպության կանոնադրությամբ գործունեության այնպիսի նպատակների սահմանումը, որը համարվում է այլ հասարակական միավորման առանձնահատկություններով պայմանավորված օրենքով ուղղակիորեն նախատեսված իրավունք:

Հոդված 4. Կազմակերպության գործունեության սկզբունքները

1. Կազմակերպության գործունեության սկզբունքներն են՝

- 1) օրինականությունը.
- 2) խտրականության բացառումը.
- 3) բարեխղճությունը.
- 4) անդամների շահերի ընդհանրությունը.
- 5) անդամության կամավորությունը.
- 6) ինքնակառավարումը.
- 7) հաշվետվողականությունը:

Հոդված 5. Կազմակերպության անդամները

1. Կազմակերպության անդամներն են Կազմակերպության պետական գրանցումից հետո Կազմակերպությանն անդամագրված անձինք:

2. Անձը կարող է այդ Կազմակերպության անդամ դառնալ իր դիմումի հիման վրա՝ սույն հոդվածով և Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով: Կազմակերպության հիմնադիրները Կազմակերպության պետական գրանցումից հետո օրենքի ուժով համարվում են Կազմակերպության

անդամներ:

3. Մինչև տասնչորս տարեկան անձը Կազմակերպության անդամ կարող է դառնալ իր ցանկությամբ՝ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա:

4. Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անձը, եթե օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ չի ճանաչված, Կազմակերպության անդամ կարող է դառնալ իր դիմումի հիման վրա՝ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ:

5. Կազմակերպության անդամը կարող է ցանկացած ժամանակ դուրս գալ Կազմակերպությունից:

6. Կազմակերպության անդամը կարող է Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով հեռացվել Կազմակերպությունից:

7. Կազմակերպության անդամները պատասխանատու չեն Կազմակերպության պարտավորությունների համար, իսկ Կազմակերպությունը պատասխանատու չէ իր անդամների պարտավորությունների համար:

Հոդված 6. Կազմակերպության անվանումը, խորհրդանիշները և գտնվելու վայրը

1. Կազմակերպությունն ունի իր անվանումը, կարող է ունենալ նաև կրճատ անվանում (անվանման հապավում) և խորհրդանիշներ:

2. Կազմակերպության անվանումը պետք է հայերենով պարունակի տարբերակող նշանակության հատուկ կամ հասարակ անուն, ինչպես նաև «հասարակական կազմակերպություն» բառերը:

3. Կազմակերպությունը կարող է ունենալ նաև օտար լեզվով անվանում:

4. Կազմակերպության անվանման մեջ «Հայաստան» բառերի հոլովածները և դրանց թարգմանությունները, ինչպես նաև ժառանգ չունենալու դեպքում մահացած հանրահայտ անձի անունը կարող են օգտագործվել Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Եթե օրենքով նախատեսված է բառեր և անվանումներ օգտագործելու համար արտոնագրի, թույլտվության կամ այլ հիմքերի

առկայություն, ապա Կազմակերպության անվանումը կամ կրճատ անվանումը (անվանման հապավումը) կարող է այդպիսի բառեր և անվանումներ պարունակել արտոնագրի, թույլտվության կամ այլ հիմքերի առկայության դեպքում:

5. Արգելվում է կազմակերպության այնպիսի անվանման, կրճատ անվանման (անվանման հապավումը) կամ խորհրդանիշի օգտագործում, որը նույնական է այլ հասարակական կազմակերպության, ներառյալ՝ գրանցմանը նախորդող վերջին մեկ տարվա ընթացքում լուծարված իրավաբանական անձանց անվանումներին, կրճատ անվանումներին (անվանման հապավումներից), պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների անվանումներին և խորհրդանիշներին:

6. Արգելվում է Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության խորհրդանիշների օգտագործումը որպես Կազմակերպության խորհրդանիշ կամ խորհրդանիշի մաս:

7. Կազմակերպության անվանումն այլ անձի կողմից ապօրինի օգտագործելու, այդ թվում՝ Կազմակերպության անվանմամբ իրավունքներ և պարտականություններ ձեռք բերելու դեպքում Կազմակերպությունն իր իրավունքները կարող է պաշտպանել դատական կարգով:

8. Կազմակերպության գտնվելու վայրը իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում օրենքով սահմանված կարգով գրանցված՝ Կազմակերպության գտնվելու վայրն է:

9. Կազմակերպության գտնվելու վայրի փոփոխության դեպքում Կազմակերպությունը իրավաբանական անձանց պետական գրանցման մարմնին (այսուհետ՝ Գործակալություն) տեղեկացնում է օրենքով սահմանված կարգով և ժամկետում:

Հոդված 7. Կազմակերպության գույքը

1. Կազմակերպությունը՝ որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

2. Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ձեռնարկատիրական

գործունեությունից ստացված շահույթը նրա անդամների միջև չի բաշխվում:

3. Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝

1) Կազմակերպության անդամների ներդրումները.

2) Կազմակերպության անդամների վճարումները (անդամավճարները).

3) ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները.

4) իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ կազմակերպությունից ստացված միջոցները.

5) դրամական մուտքերը պետական բյուջեից.

6) նվիրաբերությունները, այդ թվում՝ դրամաշնորհները.

7) հանգանակությունները.

8) օրենքով չարգելված այլ միջոցները:

Հոդված 8. Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունը

1. Կազմակերպությունն իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինել իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծել առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից:

2. Կազմակերպությունը վարում է ձեռնարկատիրական գործունեության առանձնացված հաշվառում՝ դրա վերաբերյալ տեղեկությունները ներառելով օրենքով նախատեսված հաշվետվություններում:

3. Կազմակերպության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացված շահույթը օգտագործվում է միայն կազմակերպության կանոնադրական նպատակների ուղղությամբ:

Հոդված 9. Կազմակերպության գործունեության պետական երաշխիքները

1. Պետությունն օրենքով սահմանված կարգով ապահովում է կազմակերպության իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

2. Պետությունը կազմակերպություններին օգնություն և աջակցություն է ցուցաբերում օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված դեպքերում ու կարգով:

3. Կազմակերպությունը իր կամ պետական մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների նախաձեռնությամբ կարող է պայմանագրային կամ փոխադարձ համաձայնության այլ ձևով ամբողջությամբ իրականացնել կամ մասնակցել պետական մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների սոցիալական, առողջապահական, կրթական, դաստիարակչական, մշակութային, մարզական ծրագրերին և այլ միջոցառումներին:

4. Արգելվում է պետական մարմիններին և տեղական ինքնակառավարման մարմիններին և նրանց պաշտոնատար անձանց միջամտել կամ խոչընդոտել Կազմակերպության օրինական գործունեությանը:

ԳԼՈՒԽ 2

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Հոդված 10. Կազմակերպության ստեղծումը

1. Կազմակերպությունը կարող է ստեղծվել նոր Կազմակերպության հիմնադրման կամ օրենքով սահմանված կարգով՝ գոյություն ունեցող իրավաբանական անձի վերակազմակերպման միջոցով:

2. Կազմակերպության ստեղծումը հիմնադրման միջոցով իրականացվում է նրա հիմնադիր ժողովի որոշմամբ:

3. Կազմակերպություն կարող են հիմնադրել առնվազն երկու անձ՝ ֆիզիկական անձ և (կամ) իրավաբանական անձ:

4. Կազմակերպություն չեն կարող հիմնադրել կամ դրա անդամ չեն կարող լինել կուսակցությունները, կրոնական կազմակերպությունները, արհեստակցական միությունները, ինչպես նաև օրենքով Կազմակերպություն հիմնելու կամ նրա անդամ դառնալու իրավասություն չունեցող իրավաբանական անձինք:

5. Կազմակերպությունը ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

6. Կազմակերպությունը ստեղծված է համարվում առանց ժամկետի սահմանափակման (անժամկետ), եթե նրա կանոնադրությամբ գործունեության ժամկետի սահմանափակում նախատեսված չէ:

Հոդված 11. Կազմակերպության ստեղծելու մասին պայմանագիրը

1. Կազմակերպություն հիմնադրել ցանկացող անձինք միմյանց հետ կարող են կնքել Կազմակերպություն ստեղծելու մասին գրավոր պայմանագիր, որը պարունակում է՝

1) տեղեկություններ Կազմակերպություն հիմնադրող անձանց մասին (ֆիզիկական անձանց դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի տվյալները, բնակության վայրի կամ հաշվառման հասցեն, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ պետությունը, որտեղ հիմնադրվել է, լրիվ անվանումը (ֆիրմային անվանումը), պետական գրանցման տվյալները, գտնվելու վայրի հասցեն, (այսուհետ՝ նույնականացնող տվյալներ)),

2) մինչև Կազմակերպության պետական գրանցումը հիմնադրող անձանց գործողությունների իրականացման կարգը,

3) Կազմակերպություն հիմնադրող անձանց իրավունքները և պարտականությունները,

4) Կազմակերպությանը՝ հիմնադրող անձանց կողմից գույք հանձնելու պայմանները, եթե գույքի հանձնում նախատեսվում է,

5) Կազմակերպության հիմնադիր ժողով գումարելու կարգը:

2. Եթե Կազմակերպություն հիմնադրել ցանկացող ֆիզիկական անձը՝

1) մինչև տասնչորս տարեկան է, ապա պայմանագիրը նրա անունից կնքում է նրա օրինական ներկայացուցիչը.

2) տասնչորսից մինչև տասնութ տարեկան է և օրենքով սահմանված կարգով

լրիվ գործունակ ճանաչված չէ, ապա պայմանագիրը կնքվում է իր օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ:

Հոդված 12. Կազմակերպության հիմնադիր ժողովը

1. Հիմնադիր ժողովին մասնակցելու իրավունք ունեն Կազմակերպությունը հիմնադրողները (նրանց օրինական ներկայացուցիչները), ինչպես նաև Կազմակերպություն ստեղծելու մասին պայմանագրով նախատեսված անձինք:

2. Եթե Կազմակերպություն հիմնադրող անձինք կնքել են պայմանագիր, ապա Հիմնադիր ժողովը գումարվում է Կազմակերպություն ստեղծելու մասին պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում՝ ժողովի մասնակիցների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ:

3. Հիմնադիր ժողովը՝

1) ընդունում է որոշում Կազմակերպության հիմնադրման մասին,

2) հաստատում է Կազմակերպության կանոնադրությունը,

3) ընտրում է (նշանակում է) այն անձին կամ անձանց կամ նրանց ժամանակավոր պաշտոնակատարներին, որոնք իրավասու են առանց լիազորագրի ներկայացնել Կազմակերպությանը, եթե Կազմակերպության կանոնադրությամբ այդպիսի անձինք նախատեսված են,

4) կազմավորում (ընտրում) է Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ մարմիններ:

4. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված որոշումը ընդունվում է միաձայն, 2-րդ կետով սահմանված հարցով որոշումը ընդունվում է մասնակիցների ձայների երկու երրորդով, իսկ մյուս որոշումները՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

5. Հիմնադիր ժողովի արձանագրությունը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

1) ժողովի գումարման կամ կազմակերպման օրը և վայրը,

2) ժողովին մասնակցելու իրավունք ունեցող և ժողովին մասնակցած անձանց

անունները, ազգանունները, իսկ մասնակիցների թիվը տասից ավել լինելու դեպքում՝ միայն ժողովին մասնակցելու իրավունք ունեցող և ժողովին մասնակցած անձանց քանակը,

3) ժողովի օրակարգը,

4) քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները, ընդունված որոշումները,

5) հիմնադիր իրավաբանական անձի անվանումը և գրանցման համարը:

6. Հիմնադիր ժողովի արձանագրությունը ստորագրում են ժողովի նախագահողը և քարտուղարը:

Հոդված 13. Կազմակերպության կանոնադրությունը

1. Կազմակերպության հիմնադիր փաստաթուղթը կանոնադրությունն է, որտեղ ամրագրվում է Կազմակերպության՝

1) անվանումը և կրճատ անվանումը),

2) գտնվելու վայրը,

3) գործունեության առարկան և նպատակները,

4) բարձրագույն մարմինը՝ ժողով, համաժողով, վեհաժողով, համագումար և այլն (այսուհետ՝ ժողով), ժողով գումարելու կարգը, ժամկետները և լիազորությունները, որոշումներ ընդունելու կարգը,

5) գործադիր մարմինը (նախագահը, կառավարիչը, տնօրենը և այլն) և մարմնի լիազորությունները,

6) կառավարման այլ մարմնի առկայության դեպքում, մարմին ձևավորելու կարգը, մարմնի լիազորությունները, լիազորությունների ժամկետները և որոշումներ ընդունելու կարգը,

7) գործադիր մարմնից բացի, այն մարմինը, որն իրավասու է առանց լիազորագրի ներկայացնել Կազմակերպությունը, ինչպես նաև մարմնի ընտրության (նշանակման) կարգը և լիազորությունները,

8) անդամներին առաջադրվող պահանջները և անդամ դառնալու կարգը,

ինչպես նաև Կազմակերպությունից անդամների դուրս գալու կարգը,

9) Կազմակերպության շահառուները,

10) անդամների իրավունքները և պարտականությունները,

11) անչափահաս անդամների իրավունքների կամ պարտականությունների առանձնահատկությունները, եթե նախատեսված է անչափահաս անձի անդամություն.

12) անդամին Կազմակերպությունից հեռացնելու դեպքերն ու կարգը,

13) գույքը տնօրինելու և կառավարելու կարգը,

14) Ժողովին հաշվետվություններ ներկայացնելու և հաստատելու կարգն ու ժամկետները,

15) այն մարմինը, որն իրավասու է սահմանել անդամավճարի չափը և դրա գանձումը կազմակերպելու կարգը (եթե կանոնադրությամբ նախատեսված է անդամավճարի գանձում).

16) գործունեությունը վերահսկելու կարգը (եթե կանոնադրությամբ նախատեսված է վերստուգող մարմին),

17) կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու կարգը,

18) գործունեության ժամկետը, եթե Կազմակերպությունը ստեղծվել է որոշակի ժամկետով,

2. Կազմակերպության կանոնադրությամբ կարող են նաև նախատեսվել՝

1) նրա բոլոր անդամների կամ կանոնադրությամբ սահմանված կարգով որոշված համամասնությամբ՝ անդամներից ընտրված պատվիրակների մասնակցությունը Ժողովին,

2) Ժողովի օրակարգի, նրա աշխատանքը սկսելու վայրի և ժամանակի մասին մասնակիցների ծանուցելու եղանակները և ժամկետները.

3) անդամների առավելագույն քանակական կամ որակական պահանջներ.

4) գործունեության կազմակերպմանն առնչվող՝ օրենքին չհակասող այլ դրույթներ:

3. Կազմակերպության կանոնադրությունը, ինչպես նաև դրանում փոփոխությունները և (կամ) լրացումները կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունն ուժի մեջ է մտնում պետական գրանցման պահից: Կազմակերպության կանոնադրության պետական գրանցում ստացած փոփոխությունները և լրացումներն այդ կանոնադրության անբաժանելի մասն են:

4. Պետական գրանցումից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում Կազմակերպության կանոնադրությունը և դրա փոփոխությունները հասանելի են դառնում Գործակալության պաշտոնական ինտերնետային կայքում:

5. Կազմակերպության կանոնադրության և կառավարման մարմինների իրավական ակտերի միջև հակասության դեպքում գործում է կանոնադրությունը:

6. Պետական գրանցումից հետո ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի և Կազմակերպության կամ նրա առանձնացված ստորաբաժանման կանոնադրության միջև հակասության դեպքում Կազմակերպությունը պարտավոր է մեկ տարվա ընթացքում կանոնադրությունը համապատասխանեցնել նորմատիվ-իրավական ակտի պահանջներին և ազատվում է պետական գրանցման համար պետական տուրք վճարելու պարտականությունից: Մինչև Կազմակերպության կանոնադրությունը նորմատիվ-իրավական ակտի պահանջներին համապատասխանեցնելը գործում են նորմատիվ-իրավական ակտի պահանջները:

Հոդված 14. Կազմակերպության պետական գրանցումը

1. Կազմակերպության պետական գրանցումը, ինչպես նաև Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, լրացումների կամ նոր խմբագրությամբ կանոնադրության, հիմնադրող անձանց կամ գործադիր մարմնի կամ առանց լիազորագրի Կազմակերպությանը ներկայացնելու իրավասություն ունեցող ֆիզիկական անձի անձնագրային տվյալների կամ իրավաբանական անձի գրանցման տվյալների

փոփոխության (այսուհետ՝ Կազմակերպության փոփոխությունների) և Կազմակերպության վերակազմակերպմամբ կամ լուծարմամբ պայմանավորված պետական գրանցումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով՝ հիմք ընդունելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

2. Կազմակերպության պետական գրանցման նպատակով՝ Գործակալություն է ներկայացվում՝

1) պետական գրանցման մասին դիմում,

2) Կազմակերպության հիմնադիր ժողովի արձանագրությունը և սույն օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված որոշումները,

3) Կազմակերպության կանոնադրությունը (թղթային կրիչով ներկայացվելու դեպքում՝ կանոնադրության առնվազն երկու օրինակ),

4) պետական գրանցման համար պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ,

5) հիմնադրող իրավաբանական անձանց վերաբերյալ տեղեկություններ (իրավաբանական անձ հիմնադրելու մասին որոշումը և իրավաբանական անձի անվանումը և պետական գրանցման համարը), իսկ օտարերկրյա իրավաբանական անձի դեպքում՝ նաև քաղվածք՝ տվյալ երկրի առևտրային գրանցամատյանից, կամ օտարերկրյա իրավաբանական անձի իրավական կարգավիճակը հաստատող այլ համազոր փաստաթուղթ և նրա հիմնադիր փաստաթղթերը (կամ համապատասխան քաղվածքները)՝ հայերեն թարգմանված և նոտարական կարգով վավերացված,

6) տեղեկություններ այն անձանց կամ նրանց ժամանակավոր պաշտոնակատարների մասին (անձը նույնականացնող տվյալները, կապի միջոցները), որոնք իրավասու են ներկայացնելու Կազմակերպությունն առանց լիազորագրի, եթե Կազմակերպության կանոնադրությամբ այդպիսի անձինք նախատեսված են,

7) «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկությունները:

3. Անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը իրավաբանական անձանց պետական

ռեգիստրի գործակալություն ներկայացնելուց հետո ոչ ուշ քան տասը աշխատանքային օրվա ընթացքում գործակալությունը պարտավոր է կատարել Կազմակերպության պետական գրանցումը կամ մերժել պետական գրանցումը:

4. Եթե անձը փաստաթղթերը գործակալություն ներկայացնելիս օգտվում է փաստաթղթերի նմուշային ձևերից, ապա գրանցումը իրականացվում է երկու օրվա ընթացքում:

5. Կազմակերպության վերագրանցումը, կանոնադրության փոփոխությունների պետական գրանցումը կամ վերագրանցման, պետական գրանցման մերժումը կատարվում է սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում, եթե Կազմակերպությունը չի օգտվել փաստաթղթերի նմուշային ձևերից:

ԳԼՈՒԽ 3

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 15. Կազմակերպության անդամների իրավունքները և պարտականությունները

1. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

1) Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով ընտրել և ընտրվել Կազմակերպության կառավարման կամ վերահսկողություն իրականացնող մարմիններում.

2) ներկա գտնվել ժողովին անձամբ, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նաև լիազորված անձի միջոցով կամ Կազմակերպության կոլեգիալ կառավարման այլ մարմինների նիստերին.

3) Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով օգտվել նրա ծառայություններից.

4) ծանոթանալ Կազմակերպության մարմինների արձանագրություններին,

ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները.

5) Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված կամ դատական կարգով բողոքարկել Կազմակերպության մարմինների որոշումները.

6) Կազմակերպությունից պահանջել տեղեկություններ, ստանալ փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալ նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին 3 տարիներին.

7) իրականացնել օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:

2. Կազմակերպության անդամը պարտավոր է.

1) կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները և կառավարման մարմինների որոշումները.

2) բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները.

3) վճարել անդամավճար, եթե կանոնադրությամբ սահմանված է:

Հոդված 16. Կազմակերպության իրավունքները

1. Կազմակերպությունն իր կանոնադրության նպատակներին համապատասխան իրավունք ունի՝

1) իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող.

2) բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով.

3) ստեղծել այլ կազմակերպություն կամ լինել նրա մասնակից.

4) ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ.

5) տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին.

6) կազմակերպել և անցկացնել խաղաղ, առանց զենքի հավաքներ.

7) օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամների, շահառուների և կամավորների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում.

8) համագործակցել այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային կամ օտարերկրյա կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծել Կազմակերպություն կամ անդամակցել նրանց ստեղծած Կազմակերպությանը՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը.

9) կատարել օրենքով չարգելված այլ գործողություն:

2. Կազմակերպությունն իր շահառուների օրինական շահերը դատարանում ներկայացնում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտում:

3. Կազմակերպությունը սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ոլորտից բխող հարցերով կարող է հայց ներկայացնել, եթե.

1) հայցադիմումը բխում է կազմակերպության կանոնադրական նպատակներից և խնդիրներից և ուղղված է կազմակերպության շահառուների՝ կազմակերպության կանոնադրային նպատակների հետ կապված կոլեկտիվ շահերի պաշտպանությանը,

2) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում մասնակցել է հիմնադրութային փաստաթղթերի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային քննարկումներին կամ հանրային քննարկումներին մասնակցելու հնարավորություն չի տրվել, և

3) հայց ներկայացնելու պահին նախորդող առնվազն 2 տարվա ընթացքում գործունեություն է ծավալել սույն հոդվածի 2-րդ մասում նշված ոլորտում:

Հողված 17. Կազմակերպության կամավորները և շահառուները

1. Կազմակերպությունը կարող է իր նպատակներին համապատասխան՝ ունենալ շահառուներ, ինչպես նաև իր աշխատանքներում ներգրավել կամավորներ:

2. Կազմակերպության շահառուներն են նրա կանոնադրությամբ նախատեսված անձինք կամ անձանց խմբերը, որոնց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված է Կազմակերպության գործունեությունը: Կազմակերպության կողմից կամավորներ ներգրավելու իրավահարաբերությունների նկատմամբ կիրառվում են «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը այնքանով, որքանով այդ կարգավորումները չեն հակասում սույն օրենքին:

3. Եթե կամավորի աշխատանքի տևողությունը գերազանցում է շաբաթական 20 ժամը, ապա Կազմակերպությունը կամավորների հետ կնքում է կամավոր աշխատանքի մասին պայմանագիր:

4. Կամավոր աշխատանքի մասին պայմանագիրը համաձայնություն է կամավորի և Կազմակերպության միջև, որի հիման վրա կամավորն իր կամքով, առանց վարձատրության և որոշակի ժամկետով իրականացնում է կամավոր աշխատանք, իսկ Կազմակերպությունը ապահովում է կամավոր աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ, անվտանգ և առողջության համար անվնաս պայմաններ:

5. Կամավոր աշխատանքի մասին պայմանագրում նշվում են՝

- 1) պայմանագիրը կնքելու տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը,
- 2) Կազմակերպության անվանումը,
- 3) Կազմակերպության անունից պայմանագիրը ստորագրող անձի պաշտոնը, անունը, ազգանունը,
- 4) կամավորի անունը, ազգանունը, նրա ցանկությամբ՝ նաև հայրանունը,
- 5) կամավոր աշխատանքի նկարագիրը և աշխատանքային գործառույթները, իրականացման կարգը և պայմանները,
- 6) Կազմակերպության և կամավորի իրավունքները և պարտականությունները,
- 7) աշխատաժամանակի ռեժիմը,

8) պայմանագրի գործողության ժամկետը:

Կամավոր աշխատանքի մասին պայմանագրում կարող են ներառվել նաև կամավոր աշխատանքի վերաբերյալ այլ պայմանները:

6. Կազմակերպությունը կամավորին հատուցում է տրամադրում կամավոր աշխատանքի իրականացման արդյունքում վերջինիս կողմից փաստացի կատարված ծախսերի դիմաց:

7. Արգելվում է կամավորներին ներգրավել Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության մեջ:

8. Կամավոր աշխատանքի հետ կապված վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հոդված 18. Կազմակերպության պարտականությունները

1. Կազմակերպությունը պարտավոր է՝

1) վարել իր անդամների և կամավորների հաշվառումը.

2) սույն օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված դեպքում ենթարկվել պարտադիր աուդիտի.

3) պաշտոնական կայքի առկայության դեպքում հասցեի վերաբերյալ ծանուցել Գործակալությանը.

4) սույն օրենքի պահանջների կատարումը ստուգելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Լիազոր մարմին) պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել իր կառավարման մարմինների որոշումների պատճենները կամ գործունեության մասին այլ փաստաթղթեր.

5) կազմակերպության անդամի պահանջով ոչ ավելի, քան պահանջի ստացման օրվանից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու Կազմակերպության կանոնադրությանը,

հիմնադիր այլ փաստաթղթերին, ժողովի որոշումներին կամ տրամադրել դիմողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ պահանջի ստացման օրվանից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետում նշված տեղեկությունները, փաստաթղթերը տրամադրելու համար կարող է գանձվել վճար, որը չի կարող գերազանցել դրանք տրամադրելու համար կատարված ծախսերը:

6) Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, ինչպես նաև վերակազմակերպման կամ լուծարման դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով դիմել Գործակալություն.

7) իր գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները ներկայացնել կազմակերպության *գործադիր մարմնի* հաստատմանը՝ *ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնությունը*.

8) կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

2. Կազմակերպության մարմինները նրա անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամտորեն՝ ի շահ Կազմակերպության:

ԳԼՈՒԽ 4

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 19. Կազմակերպության կառավարման մարմինները

1. Կազմակերպության կառավարման մարմիններն են՝ ժողովը և գործադիր մարմինը:

2. Կազմակերպության կանոնադրությամբ կարող են նախատեսվել նաև կառավարման այլ մարմիններ, այդ թվում՝ կոլեգիալ կառավարման մարմին, վերստուգող մարմին, որոնց լիազորությունների ժամկետները սահմանվում են օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ:

3. Օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ գործադիր մարմին

վերապահված լիազորությունները կարող է իրականացնել Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այն մարմինը, որն իրավասու է առանց լիազորագրի ներկայացնել Կազմակերպությանը:

4. Կազմակերպության անդամը, որն ընդգրկված է նրա մշտապես գործող մարմիններում, չի կարող միաժամանակ ընտրվել վերստուգող մարմնում:

Հոդված 20. Ժողովի գումարման կարգը

1. Հերթական ժողովները գումարվում են Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված պարբերականությամբ, սակայն ոչ պակաս, քան 5 տարին մեկ անգամ:

2. Ժողովն իրավագոր է, եթե գումարվել է սույն օրենքին և Կազմակերպության կանոնադրությանը համապատասխան և ժողովին մասնակցում են Կազմակերպության բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների ընդհանուր թվի կեսից ավելին, եթե Կազմակերպության կանոնադրությամբ մասնակիցների ավելի մեծ քանակ նախատեսված չէ:

3. Ժողովի օրակարգի, նրա աշխատանքի ժամանակի և վայրի մասին մասնակիցները պետք է ծանուցվեն պատվիրված նամակով կամ Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ եղանակով՝ կանոնադրությամբ սահմանված ժամկետներում, սակայն ոչ ուշ, քան ժողովի անցկացման օրվանից 5 օր առաջ՝ հավաստելով հասցեատիրոջ կողմից ծանուցումը ստանալու փաստը:

4. Եթե այլ բան նախատեսված չէ Կանոնադրությամբ, արտահերթ ժողով գումարվում է.

- 1) գործադիր մարմնի նախաձեռնությամբ.
- 2) Կազմակերպության անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ.
- 3) վերստուգող մարմնի նախաձեռնությամբ, եթե Կազմակերպության կանոնադրությամբ վերստուգող մարմնի կազմավորում նախատեսված է:

5. Կազմակերպության արտահերթ ժողովը գումարվում է սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված նախաձեռնությունից ոչ ուշ, քան 5 օրվա ընթացքում, եթե

կանոնադրությամբ այլ ժամկետ նախատեսված չէ:

6. Հերթական կամ արտահերթ ժողով գումարվում է դրա մասնակիցների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ:

7. Արտահերթ ժողով գումարելու ժամանակի և վայրի մասին ժողովի մասնակիցները ծանուցվում են Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված ժամկետներում, սակայն ոչ ուշ, քան արտահերթ ժողով անցկացնելու օրվանից 5 օր առաջ:

8. Ժողովի արձանագրությունը ստորագրում են ժողովի նախագահողը (նիստերը վարողը) և քարտուղարը:

9. Ժողովի արձանագրությունները պահպանվում են Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված ժամկետում, որը չի կարող 5 տարուց պակաս լինել:

Հոդված 21. Ժողովի իրավասությունը

1. Ժողովն ունի Կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերջնական լուծման վերաբերյալ որոշում կայացնելու իրավունք:

2. Ժողովն իրավասու է՝

1) կատարել Կազմակերպության կանոնադրությունում փոփոխություններ կամ լրացումներ կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատել:

2) ստեղծել այլ իրավաբանական անձ, որոշումներ ընդունել այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին.

3) որոշումներ ընդունել Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին.

4) հաստատել Կազմակերպության կառուցվածքը,

5) ընտրել Կազմակերպության գործադիր մարմնին.

6) որոշումներ ընդունել Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված մարմինների կազմավորման, ընտրության (նշանակման) կամ նրանց

լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու (զբաղեցրած պաշտոնից ազատելու) մասին.

7) կազմակերպության գործադիր մարմնի վարձատրություն նախատեսված լինելու դեպքում սահմանել վարձատրության կարգը և պայմանները.

8) ընտրել Կազմակերպության աուդիտն իրականացնող անձին (աուդիտորի), եթե սույն օրենքի 26-րդ հոդվածի համաձայն Կազմակերպությունը ենթակա է պարտադիր աուդիտի.

9) հաստատել Կազմակերպության ռազմավարությունը, եթե Կազմակերպությունը նախատեսում է ունենալ ռազմավարություն.

10) *առնվազն 5 տարին մեկ հաստատել գործադիր մարմնի կողմից ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները.*

11) դադարեցնել Կազմակերպության մարմինների իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողությունը.

12) Ընդունել որոշում Կազմակերպության վերակազմակերպման մասին.

13) ընդունել որոշում Կազմակերպությունը լուծարելու մասին, բացառությամբ՝ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի.

14) իրականացնել օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

3. Ժողովի՝ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված լիազորությունները, բացառությամբ՝ 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ, 11-12-րդ կետերով սահմանվածներից, կարող են Կազմակերպության կանոնադրությամբ կամ Ժողովի որոշմամբ փոխանցվել կանոնադրությամբ նախատեսված կոլեգիալ կառավարման այլ մարմնի:

Հոդված 22. Ժողովի որոշումները

1. Ժողովի որոշումներն ընդունվում են Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով:

2. Եթե ժողովում քննարկվում է Ժողովի որևէ մասնակցի կամ նրա հետ

փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա ժողովի տվյալ մասնակիցը քվեարկությանը չի մասնակցում:

3. Ժողովի որոշումը, որն ընդունվել է օրենքի կամ Կազմակերպության կանոնադրության խախտմամբ կամ ոտնահարել է Կազմակերպության կանոնա մասնակցի (անդամի) իրավունքներն ու օրինական շահերը, կարող է դատական կարգով անվավեր ճանաչվել Կազմակերպության կամ մասնակցի (անդամի) դիմումի հիման վրա: Դիմումը կարող է տրվել 60 օրվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ Կազմակերպության անդամն իմացել է կամ պարտավոր էր իմանալ այդպիսի որոշման ընդունման մասին, եթե օրենքով այլ բան սահմանված չէ:

Հոդված 23. Գործադիր մարմինը և նրա իրավասությունը

1. Գործադիր մարմինն ընտրում է ժողովը: Գործադիր մարմնի լիազորությունների ժամկետը չի կարող սահմանվել ավելի, քան հերթական ժողովի գումարման՝ կանոնադրությամբ սահմանված պարբերականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ:

2. Գործադիր մարմնի իրավասությունները ներառում են Կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարման, ինչպես նաև Կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունն ապահովելուն ուղղված բոլոր հարցերը:

3. Գործադիր մարմինը Կազմակերպության կանոնադրությանը և ժողովի որոշումներին համապատասխան՝

1) ապահովում է ժողովի կամ Կազմակերպության կոլեգիալ կառավարման այլ մարմինների որոշումների կատարումը.

2) կանոնադրությամբ սահմանված կարգով և չափով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Կազմակերպության անունից.

3) ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.

4) տալիս է լիազորագրեր.

5) բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.

6) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

7) հաստատում է Կազմակերպության հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը.

8) հաստատում է Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները,

9) հաստատում է Կազմակերպության, ինչպես նաև նրա մարմինների հաշվետվությունները,

10) իրականացնում է օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

4. Գործադիր մարմինն իր լիազորություններն իրականացնելիս Կազմակերպության անունից հանդես է գալիս առանց լիազորագրի:

5. Գործադիր մարմինը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում մարմնի ղեկավարը, կրում է օրենքով նախատեսված պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, Կազմակերպության կանոնադրության, Ժողովի որոշումների կամ կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

ԳԼՈՒԽ 5

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 24. Կազմակերպության գործունեության հաշվետվությունը

1. Կազմակերպությունը օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնում է հաշվետվություններ:

2. Եթե Կազմակերպության գույքի ստացման աղբյուր են հանդիսացել հանրային միջոցները (պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների և այլ հանրային միջոցներ տնօրինող մարմնի կամ իրավաբանական անձի միջոցներ), ապա Կազմակերպությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող մայիսի 30-ը Կազմակերպությունների կողմից հրապարակվող հաշվետվությունների համար նախատեսված կայքում հրապարակել սույն հոդվածով նախատեսված հաշվետվությունը:

3. Կազմակերպության հաշվետվությունը ներառում է՝

- 1) իրականացրած ծրագրերի անվանումներն ու վայրերը,
- 2) տարեկան մուտքերի (դրամական և գույքային) ընդհանուր գումարը և ստացման աղբյուրը,
- 3) դրամական միջոցների և այլ գույքի օգտագործման, կանոնադրական նպատակներին ուղղված ծախսերը.

4) *իրականացրած ծրագրերի արդյունքների մասին տեղեկատվություն.*

5) անդամների, ինչպես նաև կամավորների թիվը՝ (հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ), այդ թվում նշում Կազմակերպության միջոցներից հաշվետու տարվա ընթացքում օգտվելու մասին.

5) Ժողովի և կոլեգիալ կառավարման այլ մարմինների նիստերի քանակը,

6) Կազմակերպության գտնվելու վայրը:

4. Այն Կազմակերպությունները, որոնց գույքի ստացման աղբյուր չեն հանդիսացել սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանրային միջոցները, իրավունք ունեն Կազմակերպությունների կողմից հրապարակվող հաշվետվությունների

համար նախատեսված կայքում հրապարակել ինչպես սույն հոդվածով նախատեսված հաշվետվությունը, այնպես էլ իր գործունեության ցանկացած արդյունքի վերաբերյալ տեղեկություններ կամ նյութեր: Սույն հոդվածով նախատեսված հաշվետվությունը պահպանվում է Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված ժամկետում, որը չի կարող 5 տարուց պակաս լինել:

5. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հաշվետվության օրինակելի ձևը, հրապարակման և ներկայացման կարգը հաստատում է լիազոր մարմինը:

Հոդված 25. Վերստուգող մարմինը

1. Եթե Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսվում է վերստուգող մարմնի կազմավորում, ապա Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման վերաբերյալ հաշվետվությունները ժողովի կամ Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված կոլեգիալ կառավարման այլ մարմնի հաստատմանն են ներկայացվում դրանց վերաբերյալ վերստուգող մարմնի եզրակացության հետ միասին:

2. Վերստուգող մարմինն իրավասու է՝

1) տարին մեկ անգամ անցկացնել Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում.

2) ծանոթանալ Կազմակերպության գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերին և Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով պարտադիր քննարկման ենթակա առաջարկություններ ներկայացնել նրա մարմիններին.

3) պահանջել և ստանալ Կազմակերպության գործունեության վերաբերյալ տեղեկություններ.

4) իրականացնել Կազմակերպության կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ նախատեսված այլ լիազորություններ:

3. Սույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված հաշվետվությանը կից

ներկայացվում է վերստուգող մարմնի եզրակացությունը, որն առնվազն պարունակում է սվյալներ.

- 1) Կազմակերպության գույքի և ստացման աղբյուրների վերաբերյալ.
- 2) Կազմակերպության իրականացրած ծրագրերի և դրանց արդյունավետության վերաբերյալ.
- 3) ծրագրերի իրականացման ընթացքում ծախսված միջոցների վերաբերյալ:

Հոդված 26. Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների աուդիտը

1. Եթե Կազմակերպությունը հաշվետու տարվա ընթացքում հանրային միջոցներից ֆինանսավորվել է հինգ միլիոն և ավելի ՀՀ դրամի չափով, ապա օրենքով սահմանված կարգով պետական մարմիններին ներկայացված նրա տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ոչ ուշ, քան հաջորդող տարվա մայիսի 15-ը, հանրային միջոցներից ֆինանսավորման մասով ենթակա են պարտադիր աուդիտի՝ Կազմակերպության Ժողովի կողմից ընտրված անկախ աուդիտորի կողմից:

2. Անկախ աուդիտորի եզրակացությունը կցվում է սույն օրենքով սահմանված հաշվետվությանը:

Հոդված 27. Կազմակերպության գործունեության վերահսկողությունը

1. Սույն օրենքի պահանջների կատարման նկատմամբ օրենքով սահմանված կարգով վերահսկողությունն իրականացնում է Լիազոր մարմինը:

2. Կազմակերպության կողմից սույն օրենքների պահանջների այնպիսի խախտումներ հայտնաբերվելու դեպքում, որոնք կարող են վերացվել Կազմակերպության ձեռնարկած միջոցառումներով, Լիազոր մարմինը Կազմակերպությանն առաջարկում է խախտումները վերացնելու կարգն ու ժամկետները:

ԳԼՈՒԽ 6

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 28. Կազմակերպության միջազգային կապերը

1. Կազմակերպությունը, իր կանոնադրությանը համապատասխան, կարող է անդամակցել միջազգային և օտարերկրյա ոչ առևտրային կազմակերպություններին և ունենալ միջազգային այլ կապեր:

2. Կազմակերպությունը, իր կանոնադրությանը համապատասխան, կարող է այլ պետություններում ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ այդ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

Հոդված 29. Միջազգային և օտարերկրյա ոչ առևտրային Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում

1. Սույն օրենքով Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող դրույթները տարածվում են նաև միջազգային կամ օտարերկրյա ոչ առևտրային Կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետությունում գործող առանձնացված ստորաբաժանումների գործունեության վրա:

2. Միջազգային կամ օտարերկրյա Կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետությունում գործող առանձնացված ստորաբաժանումները չունեն իրավաբանական անձի կարգավիճակ, հաշվառվում են Հայաստանի Հանրապետությունում սահմանված կարգով և գործում են հիմնադրողի անունից ու նրա հաստատած կանոնադրության հիման վրա, որը չի կարող հակասել Հայաստանի

Հանրապետության օրենքներին: Նրանց գործունեությունը կարող է դադարեցվել հիմնադրողի որոշմամբ կամ դատարանի վճռով՝ Լիազոր մարմնի պահանջով, սույն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքի առկայության դեպքում:

ԳԼՈՒԽ 7

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

Հոդված 30. Կազմակերպության վերակազմակերպումը

1. Կազմակերպության վերակազմակերպման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են օրենքով:

Հոդված 31. Կազմակերպության գործունեության կասեցումը

1. Կազմակերպության գործունեությունը կարող է որոշակի ժամկետով կասեցվել դատարանի որոշմամբ՝ Լիազոր մարմնի դիմումի հիման վրա: *Լիազոր մարմնի դիմումը պետք է լինի պատճառաբանված՝ նշելով այն օրենքը կամ այլ իրավական ակտը, որի խախտումը հիմք է հանդիսանում Կազմակերպության գործունեությունը կասեցնելու համար և ներկայացնելով խախտման փաստը հաստատող ապացույցները:*

2. Դատարանը իրավունք ունի կասեցնել Կազմակերպության գործունեությունը, եթե՝

1) Կազմակերպությունը թույլ է տվել օրենքի կոպիտ խախտում.

2) Կազմակերպություն հիմնադրող անձը կամ լիազորված անձը Կազմակերպությունը հիմնադրելիս թույլ են տվել օրենքի էական խախտում կամ կեղծիք:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի իմաստով կոպիտ խախտում է համարվում՝

1) սույն օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով և ժամկետներում խախտումները չվերացնելը կամ

2) Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված պատասխանատվության առավել խիստ միջոցը կիրառելուց հետո՝ երեսուներորդա ժամկետում խախտումը չվերացնելը:

4. Սույն հոդվածի 2-րդ մասի իմաստով էական խախտում է համարվում՝ Կազմակերպություն հիմնադրման ժամանակ տեղի ունեցած այնպիսի խախտումը, որը եթե հայտնի լիներ հիմնադրման կամ պետական գրանցման պահին Կազմակերպությունը չէր հիմնադրվի կամ չէր գրանցվի:

5. *Կասեցման հիմքերը վերացնելու նպատակով դատարանը սահմանում է ողջամիտ ժամկետ: Կազմակերպության կողմից կասեցման հիմքերը վերացնելու վերաբերյալ ապացույցները ներկայացվում են դատարան: Դատարանը որոշում է կայացնում կազմակերպության գործունեությունը վերսկսելու մասին, եթե ներկայացված ապացույցների հիման վրա եզրահանգման է գալիս կասեցման հիմք հանդիսացող խախտումները վերացված լինելու մասին»:*

Հոդված 32. Կազմակերպության լուծարումը

1. Լիազոր մարմինը Կազմակերպության հարկադիր լուծարման պահանջով դիմում է դատարան, եթե

1) Կազմակերպությունը գործունեության ընթացքում իրականացրել է սահմանադրական կարգը բռնի տապալելու կամ աստվություն բորբոքելու կամ բռնություն կամ պատերազմ քարոզելու գործողություն.

2) Կազմակերպության գործունեությունը սույն օրենքի 31-րդ հոդվածով սահմանված կարգով կասեցվել է և կասեցման ժամանակահատվածում կամ մեկ տարվա ընթացքում կասեցման հիմքը չի վերացվել:

2. Լիազոր մարմնի՝ Կազմակերպության հարկադիր լուծարման պահանջը պետք է լինի պատճառաբանված՝ նշելով այն օրենքը կամ այլ իրավական ակտը, որի խախտումը հիմք է հանդիսանում Կազմակերպության լուծարման համար և ներկայացնելով խախտման փաստը հաստատող ապացույցներ:

3. Կազմակերպությունը լուծարվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև սնանկության հետևանքով:

4. Կազմակերպությունը լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական բյուջե:

ԳԼՈՒԽ 8

ԵԶՐԱՓՈՒԿ ԵՎ ԱՆՑՈՒՄ ԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 33. Եզրափակիչ և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-268 օրենքը:

3. Մինչև սույն օրենքով նախատեսված Կազմակերպությունների կողմից հրապարակվող հաշվետվությունների համար նախատեսված կայքի շահագործումը, Կազմակերպությունների կողմից հաշվետվությունները հրապարակվում են Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (<http://www.azdarar.am/>):

4. *Սույն օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունիսի 1-ից:*

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հասարակական կազմակերպությունների մասին», «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հակազնագցման (հակադեմփինգային) և փոխհատուցման միջոցների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ներքին շուկայի պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սպառողական կոոպերացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Գյուղատնտեսական վարկային ակումբների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի եզրակացությունը
	1	2	3	4
1	ԱԺ պատգամավոր Թևան Պողոսյան	1.«Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ	1.Ներկայացվել է «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների իրավական վիճակի առանձնահատկությունների, անձեռնմխելի կապիտալի ձևավորման, համալրման, կառավարման, կառավարումից ստացվող եկամուտների օգտագործման վրաբերյալ իրավակարգավորումներ:	1.Անձեռնմխելի կապտալով հիմնադրամների վերաբերյալ ներկայացված իրավակարգավորումները արդեն իսկ իրացված են փաթեթում ներառված՝ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի նախագծում:
		2.«Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 23,	2. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ «գ» և «դ» կետերով, ըստ որի՝ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է «ա) անձեռնմխելի կապիտալի ձևավորման և (կամ) համալրման նպատակով անձեռնմխելի կապիտալով հիմնադրամներին փոխանցված (տրամադրված) դրամական (այդ թվում՝ արտարժույթային) միջոցների և պետական պարտատոմսերի արժեքի չափով. դ) անձեռնմխելի կապիտալի	2.«Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հիմնադրամի հիմնադիրներ կարող են լինել ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, ՀՀ և օտարերկրյա իրավաբանական անձինք, բացառությամբ այն անձանց, որոնց մասնակցությունը հիմնադրամի հիմնադրմանը օրենքով արգելված կամ սահմանափակված է: Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ վերոնշյալ

		<p>«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մաս,</p>	<p>կառավարումից ստացված եկամտի չափով»:</p> <p>«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 14.1-րդ կետով «սույն օրենքի իմաստով նվազեցվող եկամուտներ են համարվում՝ «Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ անձեռնմխելի կապիտալով հիմնադրամներից ստացվող գույքը և դրամական միջոցները»:</p>	<p>նախագծերով ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում կստեղծվեն հարկումից խուսափելու անկառավարելի ռիսկեր: Մասնավորապես, առևտրային կազմակերպությունները հարկերից խուսափելու նպատակով ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտները կարող են, որպես նվիրատվություն, անսահմանափակ տրամադրել անձեռնմխելի կապիտալով հիմնադրամին՝ դրանց ամբողջ չափով նվազեցնելով իրենց հարկվող շահույթները կամ հարկվող եկամուտները, այնուհետև որպես շահառու ստանալ նշյալ եկամուտներից անձեռնմխելի կապիտալով հիմնադրամի կողմից ստացվող եկամուտները: Ընդ որում, հարկ է նկատել, որ «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է սահմանել, որ անձեռնմխելի կապիտալով հիմնադրամի կողմից անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացվող եկամուտները շահութահարկով նույնպես չեն</p>
--	--	---	---	---

				<p>հարկվելու: Այլ կերպ ասած՝ նախագծերի ընդունման դեպքում օրենքով կատեղծվեն հնարավորություններ, որպեսզի՝</p> <p>ա. ներկայումս շահութահարկով հարկվող եկամուտները առանց հարկվելու ուղղվեն անձեռնմխելի կապիտալով հիմնադրամներ,</p> <p>բ. պետական պարտատոմսերում ներդրված եկամուտները (որոնք ի դեպ ներկայումս նույնպես հարկվում են շահութահարկով) առանց հարկվելու ուղղվեն շահառու հանդիսացող անձանց, այդ թվում ֆիզիկական անձանց:</p> <p>Արդյունքում առաջարկվող արտոնությունների ընդունումը կծառայի ոչ թե նախագծերի առջև դրված նպատակներին, այլ ընդամենը առիթ կհանդիսանա նվիրատու հանդիսացող անձանց (կամ նրանց հետ սերտորեն փոխկապակցված անձանց) պետության հաշվին օրինական ճանապարհներով հարստացնելու համար:</p> <p>Միաժամանակ, հայտնում ենք, որ ոչ առևտրային կազմակերպությունների կայացման ու զարգացման համար գործող հարկային օրենսդրությամբ արդեն իսկ նախատեսված են բավական</p>
--	--	--	--	---

				<p>լայն շրջանակի հարկային արտոնություններ: Մասնավորապես՝</p> <p>1) «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝</p> <p>ա) 8-րդ հոդվածի համաձայն՝ շահութահարկով հարկման նպատակով եկամուտ չեն համարվում ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվները (այդ թվում՝ անդամավճարները) և ծառայությունները,</p> <p>բ) 23-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է ոչ առևտրային կազմակերպություններին փոխանցված (տրամադրված) միջոցների (ապրանք և (կամ) դրամական միջոցներ), նրանց մատուցված ծառայությունների արժեքի չափով, բայց ոչ ավելի, քան համախառն եկամտի 0,25 տոկոսի չափով:</p> <p>2) «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 22-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ից ազատված են հասարակական կազմակերպությունների կողմից ապրանքների անհատույց մատակարարումը կամ ծառայությունների անհատույց մատուցումը:</p>
--	--	--	--	---

				<p>3) «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ եկամտային հարկով հարկման նպատակով նվազեցվող եկամուտներ են համարվում (եկամտային հարկով չեն հարկվում) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված և հարկային մարմիններում հաշվառված ոչ առևտրային կազմակերպությունների միջոցներից կանոնադրական գործունեության շրջանակներում ֆիզիկական անձանց դրամական և բնամթերային ձևով ցույց տրված օգնության գումարները:</p>
		<p>«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված</p>	<p>«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 17-րդ և 18-րդ կետերով՝ «ԱԱՀ-ով չեն հարկվում (հարկման օբյեկտ չեն համարվում)՝ «17) անձեռնմխելի կապիտալի ձևավորման և (կամ) համալրման նպատակով անձեռնմխելի կապիտալով հիմնադրամներին դրամական (այդ թվում՝ արտարժույթային) միջոցների և պետական պարտատոմսերի փոխանցումը (տրամադրումը). 18) անձեռնմխելի կապիտալի կառավարումից եկամտի ստացումը:»</p>	<p>1) «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն, ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) են համարվում՝ ա. ապրանքների մատակարարումը՝ գործարք, որն իրականացվում է ապրանքների (այդ թվում՝ արտադրանքի և անշարժ գույքի) սեփականության իրավունքը որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց այլ անձի փոխանցելու միջոցով, բ. ծառայությունների մատուցումը՝</p>

				<p>ապրանքների մատակարարում չհամարվող գործարք (գործառնություն), որն իրականացվում է որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց, ներառյալ ոչ նյութական ակտիվների իրացումը (փոխանցումը): Ծառայությունների մատուցում է համարվում նաև ապրանքների և անշարժ գույքի վարձակալությունը:</p> <p>Միաժամանակ, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով թվարկված են «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված՝ <u>ապրանքների մատակարարում</u> կամ <u>ծառայությունների մատուցում</u> համարվող այն գործարքները, որոնք չեն հարկվում ԱԱՀ-ով (հարկման օբյեկտ չեն համարվում):</p> <p>Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ որպեսզի գործարքը հարկվի ԱԱՀ-ով, նախ այն պետք է հանդիսանա <u>ապրանքների մատակարարման</u> կամ <u>ծառայությունների մատուցման</u> գործարք, մինչդեռ անձեռնմխելի կապիտալի ձևավորման և (կամ) համալրման նպատակով անձեռնմխելի կապիտալով հիմնադրամներին դրամական (այդ</p>
--	--	--	--	---

			<p>թվում՝ արտարժույթային) միջոցների փոխանցման (տրամադրման) գործարքները, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի կիրառության իմաստով, ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման գործարքներ չեն համարվում և նշյալ գործարքները չեն կարող հանդիսանալ ԱԱՀ-ով հարկվող օբյեկտներ:</p> <p>2) «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 17-րդ մասի համաձայն, ԱԱՀ-ից ազատվում են՝ ա. բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ անձանց կողմից արժեթղթերի օտարումը, բ. տոկոսների ստացումը:</p> <p>Միաժամանակ, Նախագծի 39.10-րդ հոդվածի համաձայն՝ անձեռնմխելի կապիտալը կարող է կառավարվել բացառապես պետական պարտատոմսերում ներդրումներ կատարելու, դրանց տոկոսավճարներից և մարումից եկամուտներ ստանալու միջոցով:</p> <p>Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ անձեռնմխելի կապիտալով հիմնադրամի կողմից ստացվող</p>
--	--	--	--

				<p>տոկոսային եկամուտները, ինչպես նաև պետական պարտատոմսերի մարումից ստացվող եկամուտները ազատված են ԱԱՀ-ից և դրանց մասով կրկին անգամ հարկային արտոնություններ սահմանելու անհրաժեշտությունը բացակայում է:</p>
		<p>3.«Բարեգործության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված</p>	<p>3.«Բարեգործության մասին» 2002թ. հոկտեմբերի 8-ի ՀՕ-424-Ն ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 5-րդ մասով՝ «5. Բարեգործական ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպությունների կողմից ստեղծված անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների գործունեության սահմանափակումների, գույքի ձևավորման և կառավարման առանձնահատկությունները սահմանվում են «Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով»:</p>	<p>3.Չի ընդունվել: «Բարեգործության մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ բարեգործական կազմակերպություններն ստեղծվում են հասարակական միավորումների, հիմնադրամների, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ ձևերով: Այս առումով օրենքը սահմանում է ընդհանուր կարգավորումներ բարեգործական գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար, իսկ առանձնահատկությունները սահմանվում են իրավաբանական անձանց առանձին տեսակների մասին օրենքներով: Ավելին, օրենքում բացակայում են բարեգործական կազմակերպությունների գործունեության սահմանափակումների, գույքի ձևավորման և կառավարման մասով իրավակարգավորումները:</p>

2.	<p>«Աժ պատգամավոր Արտակ Զաքարյան»</p>	<p>«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 24-րդ հոդվածի 4-րդ մաս</p>	<p>«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 24-րդ հոդվածի 4-րդ կետի՝ «Կազմակերպությունները կողմից հրապարակվող հաշվետվությունների համար նախատեսված կայքում հրապարակել» բառերը փոխարինել «Կազմակերպությունը, կազմակերպության կողմից հրապարակվող հաշվետվությունների համար նախատեսված կայքում հրապարակում է» բառերով:</p>	<p>Ընդունվել է մասնակի: Նախագծի 24-րդ հոդվածի 3-րդ մասը, որը սահմանում է հաշվետվության բովանդակությանը ներկայացվող պահանջները, լրացվել է նոր՝ 4-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝ «իրականացրած ծրագրերի արդյունքների մասին տեղեկատվություն»: Նախագծի 24-րդ հոդվածի 4-րդ մասը վերաշարադրվել է հետևյալ կերպ՝ «Այն կազմակերպությունները, որոնց գույքի ստացման աղբյուր չեն հանդիսացել սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանրային միջոցները, իրավունք ունեն կազմակերպությունների կողմից հրապարակվող հաշվետվությունների համար նախատեսված կայքում հրապարակել ինչպես սույն հոդվածով նախատեսված հաշվետվությունը, այնպես էլ իր գործունեության ցանկացած արդյունքի մասին տեղեկություններ կամ նյութեր»:</p>
3.	<p>«Աժ պատգամավոր Կարեն Բեքարյան»</p>	<p>1.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծ</p>	<p>1.Առաջարկվում է ավելացնել օրենքի հիմնական հասկացությունների բաժին, որտեղ կազմակերպության շահառուները կարող են սահմանվել հետևյալ ձևակերպմամբ. «կազմակերպության շահառուներ են հանդիսանում այն ֆիզիկական և իրավաբանական անձը կամ անձինք, ում շահերը հատվում են տվյալ կազմակերպության նպատակների, ծրագրերի և գործողությունների հետ»:</p>	<p>1.Ընդունվել է մասնակի: Նախագծի 17-րդ հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ. «Կազմակերպության շահառուներն են նրա կանոնադրությամբ նախատեսված անձինք կամ անձանց խմբերը, որոնց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված է</p>

				<p>Կազմակերպության գործունեությունը:»</p>
		<p>2.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր</p>	<p>2.Հանել Նախագծի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը:</p>	<p>2.Չի ընդունվել: Հասարակական կազմակերպությունների՝ այլոց իրավունքների պաշտպանության խնդրով դատարան դիմելու իրավունքի իրացումն առայժմ սահմանափակվում է շրջակա միջավայրին վերաբերող հարցերով: Հասարակական կազմակերպությունների դատավարական իրավասությունների ընդլայնումը կիրականացվի աստիճանաբար՝ փուլ առ փուլ: Իրավական շահագրգռվածություն ապահովելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանել այնպիսի նախապայմաններ, որոնք կապահովեն հասարակական կազմակերպության իրավական շահագրգռվածությունը: Միայն հայցի առարկան կանոնադրային նպատակներից բխելու պահանջը դեռևս բավարար չէ իրական շահագրգռվածություն ապահովելու համար: Օրենքով նախատեսված որոշ բնապահպանական նշանակության փաստաթղթերի ընդունման գործընթացին մասնակցությունը, ինչպես նաև տվյալ ոլորտում փորձառությունը կանոնադրային նպատակների հետ մեկտեղ կարող են ապահովել հասարակական կազմակերպության իրական շահագրգռվածությունը:</p>

4.	ԱԺ պատգամավոր Էլինար Վարդանյան	1.«Հասարակական կազմակերպությունն երի մասին» ՀՀ օրենքի նախագծի 10-րդ հոդվածի 4-րդ մաս	1.Նախագծի 10-րդ հոդվածի 4-րդ մասը հանել:	1.Չի ընդունվել: Խոսքը վերբերում է հասարակական կազմակերպություն հիմնադրելու կամ հասարակական կազմակերպությանը անդամակցելու՝ կրոնական կազմակերպությունների, կուսակցությունների և արհմիությունների արգելքին:
		2.«Հասարակական կազմակերպությունն երի մասին» ՀՀ օրենքի նախագծի 16-րդ հոդվածի 2-րդ մաս	2.Նախագծի 16-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Կազմակերպությունն իրավունք ունի դիմել դատարան՝ կազմակերպության կանոնադրային նպատակների հետ կապված կոլեկտիվ շահերի պաշտպանությամբ»:	2.Չի ընդունվել: Հասարակական կազմակերպությունների՝ այլոց իրավունքների պաշտպանության խնդրով դատարան դիմելու իրավունքի իրացումն առայժմ սահմանափակվում է շրջակա միջավայրին վերաբերող հարցերով: Հասարակական կազմակերպությունների դատավարական իրավասությունների ընդլայնումը կիրականացվի աստիճանաբար՝ փուլ առ փուլ: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ վիճարկման ենթակա են լինելու այն վարչական և նորմատիվ ակտերը, որոնք բխում են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ գնահատման և փորձաքննության ենթակա

				<p>հիմնադրության փաստաթղթերից և նախատեսվող գործունեության տեսակներից: Դա, առաջին հերթին, բխում է Օրհուսի կոնվենցիայով ՀՀ-ի ստանձնած միջազգային պարտավորություններից:</p>
		<p>3.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 16-րդ հոդվածի 3-րդ մաս</p>	<p>3.Նախագծի 16-րդ հոդվածի 3-րդ մասը հանել:</p>	<p>3.Չի ընդունվել: Իրավական շահագրգռվածություն ապահովելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանել այնպիսի նախապայմաններ, որոնք կապահովեն հասարակական կազմակերպության իրական շահագրգռվածությունը: Միայն հայցի առարկան կանոնադրային նպատակներից բխելու պահանջը դեռևս բավարար չէ իրական շահագրգռվածություն ապահովելու համար: Օրենքով նախատեսված որոշ բնապահպանական նշանակության փաստաթղթերի ընդունման գործընթացին մասնակցությունը, ինչպես նաև տվյալ ոլորտում փորձառությունը կանոնադրային նպատակների հետ մեկտեղ կարող են ապահովել հասարակական կազմակերպության իրական շահագրգռվածությունը:</p>

		4.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 17-րդ հոդվածի 3-րդ մաս	4.Նախագծի 17-րդ հոդվածի 3-րդ մասում «անընդմեջ 5 օր» բառերը փոխարինել «10 ժամ և ավելի» բառերով:	4.Ընդունվել է մասնակի: Նախագծի 17-րդ հոդվածի 3-րդ մասը վերաշարադրվել է հետևյալ կերպ՝ «Եթե կամավոր աշխատանքի տևողությունը գերազանցում է շաբաթական 20 ժամը, ապա Կազմակերպությունը կամավորների հետ կնքում է կամավոր աշխատանքի մասին պայմանագիր»: Այստեղ հիմք է ընդունվել ՀՀ աշխատանքային օրենսգրքով թույլատրվող շաբաթական 40 ժամը և որպես կամավոր աշխատանքի մասին պայմանագիր կնքելու պայման սահմանվել է դրա կեսը՝ շաբաթական 20 ժամ:
		5.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 17-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերություն	5.Նախագծի 17-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերությունը լրացնել հետևյալ նոր նախադասությամբ. «Կամավոր աշխատանքի հետ կապված վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով»:	5.Ընդունվել է: Նախագծի 17-րդ հոդվածը լրացվել է նոր՝ 8-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝ «Կամավոր աշխատանքի հետ կապված վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով»:
5.	ՀՀ ԱԺ պատգամավոր Արաիկ Հովհաննիսյան	1.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ կետ	1.Նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ կետից հանել «սոցիալական, առողջապահական, կրթական, դաստիարակչական, մշակութային, մարզական» բառերը, որպեսզի տարընթերցում չառաջանա և ՀԿ-ները կարողանան մասնակցել տարբեր ծրագրերի և միջոցառումների՝ առանց սահմանափակման:	5. Ընդունվել է մասնակի: Նախագծում ոլորտների առանձնացումը կողմնորոշող նշանակություն ունի և միտված չէ սահմանափակելու կազմակերպության գործունեության շրջանակները Նախագծում

				<p>նախատեսված ձևաչափով : Այն նպատակ ունի հնարավորինս բացահայտել այն ոլորտները, որոնցում հասարակական կազմակերպությունները կարող են մասնակցություն ունենալ : Թեև Նախագծում խոսվում է նաև այլ միջոցառումների մասին, այդուհանդերձ, տարընթերցումներից խուսափելու նպատակով Նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ մասը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ՝ «Կազմակերպությունը իր կամ պետական մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների նախաձեռնությամբ կարող է պայմանագրային կամ փոխադարձ համաձայնության այլ ձևով ամբողջությամբ իրականացնել կամ մասնակցել պետական մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների սոցիալական, առողջապահական, կրթական,</p>
--	--	--	--	---

				<p>դաստիարակչական, մշակութային, մարզական և այլ ոլորտների ծրագրերին և միջոցառումներին:</p>
		<p>2.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ</p>	<p>2.Նախագծի 18-րդ հոդվածի 7-րդ կետում նշված է՝ «իր գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները ներկայացնել կազմակերպության ժողովի հաստատմանը», այնինչ, ըստ Նախագծի, հերթական ժողով կարող է հրավիրվել հինգ տարին մեկ անգամ: Առաջարկվում է հանել «ժողովի հաստատմանը» բառերը և հստակեցնել խնդիրը:</p>	<p>2.Ընդունվել է: Նախագծի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում «ժողովի» բառը փոխարինվել է «գործադիր մարմնի» բառերով: Նախագծի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետը վերաշարադրվել է հետևյալ կերպ՝ ժողովն իրավասու է «առնվազն 5 տարին մեկ հաստատել գործադիր մարմնի կողմից ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները»: Նախագծի 23-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետով սահմանվել է, որ գործադիր մարմինը Կազմակերպության կանոնադրությանը և ժողովի որոշումներին համապատասխան՝ «հաստատում է Կազմակերպության, ինչպես նաև նրա մարմինների հաշվետվությունները»:</p>

		<p>3.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 21-րդ հոդվածի 7-րդ կետ</p>	<p>3.Նախագծի 21-րդ հոդվածի 7-րդ կետը հանել, քանի որ կարող են ընթացիկ փոփոխություններ լինել, այդ թվում՝ օրենսդրական դաշտի (օրինակ՝ նվազագույն աշխատավարձի և այլն) և կազմակերպությունը ստիպված կլինի ամեն անգամ նոր ժողով հրավիրել: Նախագծով սահմանված է հետևյալը՝ «Ժողովն իրավասու է՝ կազմակերպության գործադիր մարմնի վարձատրություն նախատեսված լինելու դեպքում սահմանել վարձատրության կարգը և պայմանները»:</p>	<p>3.Չի ընդունվել: Գործադիր մարմնի վարձատրության հարցը կազմակերպության ներքին գործերին վերաբերող հարցերից է, որը ենթակա է լուծման կազմակերպության որևէ իրավասու մարմնի կողմից՝ անկախ հետագա օրենսդրական փոփոխություններից: Հնարավոր չարաշահումները կանխելու նպատակով այդ իրավասությունը վերապահվել է ժողովին, և ոչ թե նույն գործադիր մարմնին: Միևնույն ժամանակ, նշված իրավասությունը կազմակերպության կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ կարող է փոխանցվել կանոնադրությամբ նախատեսված կոլեգիալ կառավարման այլ մարմնի: Նման մոտեցումը կազմակերպության գործունեության համար ապահովում է որոշակի ներքին ժողովրդավարական կարգ՝ առանցքային նշանակություն ունեցող հարցերը կոլեգիալության սկզբունքով որոշելու եղանակի միջոցով:</p>
		<p>4.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 21-րդ հոդվածի 8-րդ</p>	<p>4.Նախագծի 21-րդ հոդվածի 8-րդ կետում ներկայացված պահանջը իր բնույթով նման է վերոնշյալ 2-րդ առաջարկում նշված խնդրին: Նախագծով սահմանված է հետևյալը՝ «Ժողովն իրավասու է ընտրել</p>	<p>4.Նախորդ կետում նշված հիմնավորումը ամբողջովին վերաբերում է նաև հիշյալ առաջարկին:</p>

		կետ	Կազմակերպության աուդիտին իրականացնող անձին (աուդիտորի), եթե սույն օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ Կազմակերպությունը ենթակա է պարտադիր աուդիտի»:	
		5.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 24-րդ հոդվածի 2-րդ կետ	5.Նախագծի 24-րդ հոդվածի 2-րդ կետից հանել «տեղական ինքնակառավարման մարմինների» բառերը:	5.Ընդունվել է մասնակի: Տեղական ինքնակառավարման մարմիններին բացառելու դեպքում կվերանա հանրային միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հնարավորությունը: Միաժամանակ, Նախագծի 24-րդ հոդվածի 2-րդ կետում «տեղական ինքնակառավարման մարմինների» բառերը փոխարինվել է «համայնքային բյուջեի» բառերով:
		6.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 26-րդ հոդված	6.Նախագծի 26-րդ հոդվածը հանել ամբողջությամբ, քանի որ կազմակերպությունները ներկայացնում են օրենքով սահմանված համապատասխան հաշվետվություններ և լրացուցիչ անցնել աուդիտ, կարծում եմ, նպատակահարմար չէ:	6.Չի ընդունվել: ՀԿ-ների գործունեությունն ունի մեծ նշանակություն նաև հասարակության լայն շրջանակների համար և ըստ այդմ՝ պետք է լինի հնարավորինս թափանցիկ և վերահսկելի: Նշված գործընթացն առավել արդյունավետ դարձնելու նպատակով ներդրվել է ֆինանսական գործունեության աուդիտը, որը ներկայումս իրականացվում է ոչ առևտրային այլ կազմակերպությունների՝

				կուսակցությունների և հիմնադրամների դեպքում, սակայն ՀԿ-ների դեպքում կարգավորումը բացակայում է: Պետք է նկատի ունենալ նաև, որ պարտադիր աուդիտի նվազագույն շեմը (5 միլիոն դրամ) ընտրվել է հասարակական կազմակերպությունների հետ քննարկումների արդյունքում:
		7.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 24-րդ հոդվածի 5-րդ կետ, 33-րդ հոդվածի 2-րդ մաս	7.Նախագծի 33-րդ հոդվածի հետ կապված, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Նախագծի 24-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված է, որ հաշվետվության օրինակելի ձևը, հրապարակման և ներկայացման կարգը հաստատում է լիազոր մարմինը, ինչը նշանակում է որոշակի ժամանակ կպահանջվի մինչև այդ կարգերը լինեն և տեղեկացվեն հասարակական կազմակերպությունները: Ուստի առաջարկվում է հաշվետվությունների ներկայացումը սույն օրենքի նոր պահանջների համաձայն իրագործել 2018թ. հունվարի 1-ից:	7.Ընդունվել է մասնակի: Նախագծի՝ «Եզրափակիչ և անցումային դրույթներ» վերտառությամբ 33-րդ հոդվածում լրացվել է նոր՝ 4-րդ մաս հետևյալ բովանդակությամբ՝ «Սույն օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունիսի 1-ից»:
		8.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 14-րդ հոդվածի 1-ին մաս	8.Նախագծի 14-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ ֆիզիկական անձանց անձնագրային տվյալների փոփոխության դեպքում կազմակերպությունը ենթակա է վերագրանցման: Ուստի առաջարկվում է վերանայել այս մոտեցումը:	8.Չի ընդունվել: Այստեղ խոսքը գնում է ոչ թե իրավաբանական անձանց պետական գրանցման՝ որպես պետության կողմից վերջինիս գոյությունը ճանաչելու գործընթացի մասին, այլ իրավաբանական անձի վերաբերյալ տեղեկությունների

				<p>փոփոխությունների պետական գրանցման մասին, որոնք ներառվում են պետական միասնական գրանցամատյանում: «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է հետևյալը՝ «Իրավաբանական անձի հիմնադրի, մասնակցի կամ գործադիր մարմնի ղեկավարի ֆիզիկական անձ լինելու դեպքում անձնագրային տվյալների կամ իրավաբանական անձ լինելու դեպքում գրանցման տվյալների փոփոխության դեպքում պետական միասնական գրանցամատյանում գրառված համապատասխան տեղեկությունները փոփոխվում են ինքնաշխատ կերպով՝ նոր տեղեկությունները փոխօգնության կարգով ստանալով համապատասխան տեղեկատվական բազան վարող պետական կառավարման մարմնից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության</p>
--	--	--	--	--

				<p>սահմանած կարգով: Այդ մասին իրավաբանական անձը (գործադիր մարմնի ղեկավարը) տեղեկացվում է էլեկտրոնային փոստի միջոցով, եթե նա տրամադրել է էլեկտրոնային փոստի հասցե: Ընդ որում, ֆիզիկական անձանց (հիմնադիր, մասնակից, գործադիր մարմնի ղեկավար) տվյալները կանոնադրության մեջ ներառելու պահանջը բացակայում է, ուստի դրանց գրանցումը կանոնադրության փոփոխության և դրա արդյունքում փոփոխված կանոնադրության պետական գրանցման անհրաժեշտություն չի առաջանում:</p>
6.	<p>ՀՀ կառավարություն</p>	<p>«Հասարակական կազմակերպությունն երի մասին» ՀՀ օրենքի նախագծի 17-րդ հոդվածի 3-րդ մաս</p>	<p>Նախագծի 17-րդ հոդվածի 3-րդ մասի «անընդմեջ 5 օր» բառերը փոխարինել «10 ժամ և ավելի» բառերով:</p> <p>Հիմնավորում - Կազմակերպության կողմից կամավորի աշխատանքի չարաշահման հնարավոր դեպքերը բացառելու կամ նվազեցնելու նպատակով առաջարկում ենք կամավորի աշխատանքի ժամկետները հաշվել ոչ թե օրերով, այլ ժամով: Հատկապես, երբ նախագծում օգտագործվում է «անընդմեջ» բառը, ապա դա լայն հնարավորություն է տալիս</p>	<p>Նախագծի 17-րդ հոդվածի 3-րդ մասը վերաշարադրվել է հետևյալ կերպ՝ «Եթե կամավոր աշխատանքի տևողությունը գերազանցում է շաբաթական 20 ժամը, ապա Կազմակերպությունը կամավորների հետ կնքում է կամավոր աշխատանքի մասին պայմանագիր»:</p> <p>Այստեղ հիմք է ընդունվել ՀՀ աշխատանքային օրենսգրքով թույլատրվող շաբաթական 40 ժամը և որպես կամավոր աշխատանքի մասին պայմանագիր կնքելու պայման սահմանվել է դրա կեսը՝ շաբաթական 20</p>

			կազմակերպությանը շարունակաբար մինչև 5 օր կամավոր ներգրավել և չկնքել նրա հետ պայմանագիր, իսկ ժամային հաշվարկի դեպքում որոշ ժամաքանակից հետո պարտավոր է կնքել պայմանագիրը: Բացի այդ «օր» եզրույթը տարընկալման տեղիք է տալիս:	ժամ:
		2.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 17-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերություն	2.Նախագծի 17-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերությունը լրացնել նոր նախադասությամբ, հետևյալ բովանդակությամբ <i>«Կամավոր աշխատանքի հետ կապված վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով»:</i> Հիմնավորում – Սա լրացուցիչ երաշխիք է կամավորի համար՝ կազմակերպության կողմից իր իրավունքների խախտման դեպքում դիմելու իրավունքի պաշտպանության:	2.Ընդունվել է: Նախագծի 17-րդ հոդվածում լրացվել է նոր՝ 8-րդ մաս հետևյալ բովանդակությամբ՝ «Կամավոր աշխատանքի հետ կապված վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով»:
		3.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 17-րդ հոդվածի 4-րդ մասի 1-րդ պարբերություն	3.Քանի որ առաջարկվող նախագծով ընդհանուր ձևակերպմամբ են սահմանված կամավոր աշխատանքի պայմանագրին	3. Նախագծի 17-րդ հոդվածի 4-րդ մասը վերաշարադրվել է հետևյալ կերպ՝ «Կամավոր աշխատանքի մասին

		<p>երի մասին» ՀՀ օրենքի նախագծի 17-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասեր</p>	<p>ներկայացվող նվազագույն պայմանները (հոդված 17, մաս 5), և բացակայում է կողմերի իրավունքների և պարտականությունների կոնկրետացման ու միօրինականացման պահանջը, ապա մտավախություն կա, որ կազմակերպությունները միասնական մոտեցում չեն ցուցաբերի կամավորի մի շարք իրավունքների ամրագրման և ապահովման հարցում: Մասնավորապես, կամավոր աշխատանքի համար անհրաժեշտ պայմանների ապահովում, անվտանգություն, փաստացի կատարած ծախսերի հատուցում և այլն: Հաշվի առնելով, որ կամավորներ ներգրավելու իրավահարաբերությունների նկատմամբ կիրառվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքը (հոդված 17, մաս 2) նպատակահարմար ենք համարում դրա կարգավորումից դուրս գտնվող հարաբերությունները ամրագրել և կարգավորել ՀԿ օրենքով, ուստի առաջարկում ենք նախագծի 17-րդ հոդվածը լրացնել նոր մասով, հետևյալ ձևակերպմամբ՝ «Կազմակերպությունն ապահովում է կամավոր աշխատանքի համար անհրաժեշտ, անվտանգ և առողջ պայմանները, ինչպես նաև կամավորին հատուցում է աշխատանքներն իրականացնելու հետևանքով փաստացի կատարած ծախսերի դիմաց»:</p>	<p>պայմանագիրը համաձայնություն է կամավորի և Կազմակերպության միջև, որի հիման վրա կամավորն իր կամքով, առանց վարձատրության և որոշակի ժամկետով իրականացնում է կամավոր աշխատանք, <i>իսկ Կազմակերպությունը ապահովում է կամավոր աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ, անվտանգ և առողջության համար անվնաս պայմաններ»:</i></p> <p><i>Կամավոր աշխատանքի հետ կապված ծախսերի հատուցման վերաբերյալ առանձնացվել է նոր՝ 6-րդ մաս հետևյալ բովանդակությամբ՝</i></p> <p><i>«Կազմակերպությունը կամավորին հատուցում է տրամադրում կամավոր աշխատանքի իրականացման արդյունքում վերջինիս կողմից փաստացի կատարված ծախսերի դիմաց»:</i></p>
--	--	---	---	--

		4.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 13-րդ հոդվածի 1-ին մաս	4.Կազմակերպության կանոնադրությանը ներկայացվող պարտադիր պահանջների շարքում անհրաժեշտ է նշել նաև շահառուները:	4.Նախագծի 13-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է նոր՝ 9-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «կազմակերպության շահառուները»:
		5.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 21-րդ հոդվածի 3-րդ մաս	5.Հասարակական կազմակերպությունների լուծարման գործընթացը դյուրացնելու նապատակով Կազմակերպության լուծարման լիազորությունը դադարում է ժողովի բացառիկ իրավասություն հադիսանալ: Այն Կազմակերպության կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ կարող է փոխանցվել կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված կոլեգիալ կառավարման այլ մարմնի:	5.Նախագծի 21-րդ հոդվածի 3-րդ մասում «13» թիվը փոխարինվել է «12» թվով:
		6.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 31-րդ հոդվածի 1ին մաս և 32-րդ հոդվածի 2-րդ մաս	6.Նախագծի 31-րդ և 32-րդ հոդվածներում, որոնք վերաբերում են Կազմակերպության գործունեության կասեցմանը և արգելմանը, հստակեցնել Կազմակերպության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու հարցով Լիազոր մարմնի դիմումի պատճառաբանվածության պահանջը:	Նախագծի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը վերաշարադրվել է հետևյալ կերպ՝ «Լիազոր մարմնի դիմումը պետք է լինի պատճառաբանված՝ նշելով այն օրենքը կամ այլ իրավական ակտը, որի խախտումը հիմք է հանդիսանում Կազմակերպության գործունեությունը կասեցնելու համար և ներկայացնելով խախտման փաստը հաստատող ապացույցները»:

				<p>Նախագծի 32-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրվել է հետևյալ կերպ՝ «Լիազոր մարմնի՝ Կազմակերպության հարկադիր լուծարման պահանջը պետք է լինի պատճառաբանված՝ նշելով այն օրենքը կամ այլ իրավական ակտը, որի խախտումը հիմք է հանդիսանում Կազմակերպության լուծարման համար և ներկայացնելով խախտման փաստը հաստատող ապացույցներ»:</p>
		<p>7.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 31-րդ հոդվածի 5-րդ մաս</p>	<p>7.Հստակեցնել Կազմակերպության կասեցված գործունեությունը վերսկսելու հետ կապված հարցերը:</p>	<p>Նախագծի 31-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրվել է հետևյալ կերպ՝ «Կասեցման հիմքերը վերացնելու նպատակով դատարանը սահմանում է ողջամիտ ժամկետ: Կազմակերպության կողմից կասեցման հիմքերը վերացնելու վերաբերյալ ապացույցները ներկայացվում են դատարան: Դատարանը որոշում է կայացնում կազմակերպության գործունեությունը վերսկսելու մասին, եթե ներկայացված ապացույցների հիման վրա եզրահանգման է գալիս կասեցման հիմք հանդիսացող խախտումները վերացված լինելու մասին»:</p>

		<p>8.ա)«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ</p> <p>բ)«Հիմնադրամաների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում 7-րդ հոդվածով լրացվող</p>	<p>ՀՀ վարչապետի հանձնարարականի հիման վրա, ըստ որի՝ «Վերացվում են Արդարադատության նախարարության կողմից իրականացվող արհեստակցական, կրոնական կազմակերպությունների և կուսակցությունների գործունեության տեսչական գործառույթները, իսկ մնացած ոչ առևտրային կազմակերպությունների վերահսկողության գործունեության, այդ թվում՝ ստուգումների անցկացման գործառույթը վերապահվում է ՀՀ կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտեի», կարգավորել Հասարակական կազմակերպությունների գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավասություն ունեցող սուբյեկտի հետ կապված հարաբերությունները:</p>	<p>«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «ՀՀ արդարադատության նախարարության» բառերը փոխարինվել են «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի» բառերով:</p> <p>«Հիմնադրամաների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում 7-րդ հոդվածով լրացվող 38-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերում, ինչպես նաև 39-րդ հոդվածի 4-րդ պարբերությունում «Հայաստանի Հանրապետության</p>

38-րդ հոդվածի 4-րդ
և 5-րդ մասեր

գ) Վարչական
իրավախախտումներ
ի վերաբերյալ ՀՀ
օրենսգրքում
փոփոխություն
և
լրացում կատարելու
մասին» ՀՀ օրենքի
նախագծի 1-ին և 2-
րդ հոդվածներով
լրացվող 169.25 և
169.26 հոդվածներ,

արդարադատության նախարարություն»
բառերը փոխարինվել են «Հայաստանի
Հանրապետության կառավարությանն
առընթեր պետական եկամուտների
կոմիտե» բառերով՝ համապատասխան
հոլովածներով:

Վարչական իրավախախտումների
վերաբերյալ ՀՀ օրենսգրքում
փոփոխություն և լրացում կատարելու
մասին» ՀՀ օրենքի նախագծով
առաջարկվող 169.25 հոդվածում, որը
վերաբերում է հասարակական
կազմակերպության կողմից
հաշվետվությունը չհրապարակելուն, «ՀՀ
արդարադատության նախարարություն»
բառերը փոխարինվել են «ՀՀ
կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե» բառերով:

Վարչական իրավախախտումների
վերաբերյալ ՀՀ օրենսգրքում
փոփոխություն և լրացում կատարելու
մասին» ՀՀ օրենքի նախագծով
առաջարկվող 169.26 հոդվածում, որը
վերաբերում է հասարակական
կազմակերպության կողմից
կանոնադրային նպատակներին
անհամապատասխան գործունեություն

դ)Վարչական
իրավախախտումներ
ի վերաբերյալ ՀՀ
օրենսգիրք, հոդվ.
169.¹⁸, 223.¹, 244.²

իրականացնելուն, «ՀՀ
արդարադատության նախարարության»
բառերը փոխարինվել են «ՀՀ
կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտեի» բառերով:

Վարչական իրավախախտումների
վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169¹⁸-րդ
հոդվածում «Հայաստանի
Հանրապետության արդարադատության
նախարարությանը», «Հայաստանի
Հանրապետության արդարադատության
նախարարություն» բառերը փոխարինվել
են համապատասխանաբար
«Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտեին», «Հայաստանի
Հանրապետության կառավարությանն
առընթեր պետական եկամուտների
կոմիտե» բառերով:

Վարչական իրավախախտումների
վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 223.1
հոդվածում հանվել է «169.¹⁸-րդ» բառը,
իսկ «օրինականության
վերահսկողության տեսչության» բառերը
փոխարինվել են «վերահսկողական
ծառայության» բառերով:

		<p>ե)«Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 26</p>		<p>Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 244.²-րդ հոդվածում «169.¹⁵» թվից հետո լրացվել է «169.¹⁸» թվով :</p> <p>«Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը ուժը կորցրած է ճանաչվել :</p>
		<p>9.«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ</p>	<p>9.Հստակեցնել նախագծի 5-րդ հոդվածը, քանի որ կատարված փոփոխությունից հետևում է, որ կազմակերպության անվանման գրանցման հնարավորությունը կամ գրանցման մերժումը որոշվում է անհապաղ, եթե անվանումը պարունակում է հայհոյանքներ, վիրավորական անվանումներ, անհարիր է ազգային կամ հոգևոր արժեքներին, հակասում է մարդասիրության և բարոյականության սկզբունքներին: Նշված սկզբունքները թվայնացման ենթակա չեն և, հետևաբար, անհապաղ կատարումն անհնար է:</p>	<p>9.Նախագծի 5-րդ հոդվածով լրացվող 32.1 հոդվածի 4-րդ մասը լրացվել է հետևյալ նախադասությամբ՝ «Սույն հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված դեպքերում Կազմակերպության անվանման գրանցումը կամ գրանցման մերժումը իրականացվում է մեկօրյա ժամկետում»:</p>

		կատարելու մասին» ՀՀ օրենքի Նախագծի 5-րդ հոդված		
		10.«Հիմնադրամների ի մասին» ՀՀ օրենք	10.«Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերնագիրը համապատասխանեցնել նախագծի բովանդակությանը՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:	10.Ընդունվել է: Նախագծի վերնագիրը վերաշարադրվել է հետևյալ կերպ՝ «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»:
		11.ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 52, մաս 2	11.«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ կետով կատարվող լրացումն համապատասխանեցնել լրացվող իրավական ակտի ձևին (տեսքին)՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 6-րդ մասի	11.Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:

			պահանջները, ինչպես նաև պահպանել համարակալման տեխնիկական կանոնները:	
		12.Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք	12.«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում լրացվող հոդվածների համարակալումը համապատասխանեցնել գործող օրենքի համարակալմանը՝ հաշվի առնելով, որ 169.25-րդ համարակալմամբ հոդված արդեն իսկ առկա է:	12.Ընդունվել է: Նախագծի համարակալման մասով կատարվել է համապատասխան փոփոխություն: